

ԲԱՆԱՍԵՐ

ՆՅՈՒԹԵՐ ԿԱԹՈԼԻԿ ՄԱՐԴՈՐՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայտնի է, որ կաթոլիկ մարդորսները, դավանափոխության համար, ի շարս այլ միջոցների, օգտագործել են նաև հավատացյալների նյութական կարիքը. փող են տվել չքավորներին և փոխարենը պարտադրել կաթոլիկություն ընդունել։

Կաթոլիկ կղերն այդ կարգի եռանդուն գործունեություն ծավալեց առանձնապես 19-րդ դարի վերջերում Կիլիկիայի հայոց մեջ։ Իզմիրլյանը (այն ժամանակ դեռ արքեպիսկոպոս), որ այդ տարիներին Երուսաղեմում էր գտնվում որպես թյուրք կառավարության աքսորական և մանրամասն տեղեկություններ էր ստանում Կիլիկիայից՝ կաթոլիկ կղերականների հակաքրիստոնեական գործունեության մասին ու անչափ զայրացած էր նրանց դեմ, 1898 թվի օգոստոսի 24-ին մի նամակ է ուղարկել Խրիմյան Հայրիկին, նկարագրել է Կիլիկիայի հայոց ծանր վիճակը և խնդրել անհապաղ նյութական օգնություն ցույց տալ նրանց, որպեսզի տեղացի հայերը, նյութական կարիքից հարկադրված, չընկնեն կաթոլիկների ձեռքը։

Խրիմյան Հայրիկը Իզմիրլյան Սրբազանի նամակը ստացել է իր Թբիլիսիում գտնված ժամանակ և 1899 թվի հունվարի 28-ին անմիջապես պատասխանել։ Նա իր նամակում վշտացած խոստովանվել է, որ դժվար է կռվել եվրոպական երկրներից կաթոլիկների միջոցով թափվող դրամական հեղեղների և հարկադրական միջոցների դեմ, սակայն, իր համեստ հնարավորությունների սահմաններում, կանի կարելին։ Խրիմյան Հայրիկն անմիջապես կարգադրել է Թբիլիսիում հանգանակություն կազմակերպել և հավաքված միջոցները փոխադրել Կիլիկիա՝ բաշխելու կարիքավորներին։ Գյուտ ավագ քահանա Աղանյանի 1899 թվի փետրվարի 17-ին Իզմիրլյանին ուղարկած նամակից երևում է, որ Թբիլիսիում, առաջին նվագում, հանգանակված է եղել 6.000 ռուբլի, որն և ուղարկվել է Կիլիկիա։

Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել Իզմիրլյան Սրբազանի նամակը Խրիմյան Հայրիկին, Խրիմյան Հայրիկի պատասխան նամակը և Գյուտ ավագ քահանա Աղանյանի նամակը Իզմիրլյան Սրբազանին։

Վավերագրերը գտնվում են Հայկ. ՍՍՌ Մատենադարանի արխիվային բաժնում։

Ա) ԻԶՄԻՐԼՅԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Նորին Սուրբ Օծութիւն
Տ. Տ. Մկրտիչ Ա. Վեհափառ Կաթողիկոս և
Հոգևոր Տէր ազգիս Հայոց

Սո՛ւրբ Հայրապետ.

Ձեր Վեհափառութիւն իւր ներքին և արտաքին այնքա՛ն ծանր դժուարութեանց մէջ՝ ի տես իւր որդւոց դառն վիճակին և կացութեան՝ յայս արտասուս կը կարկառէ իւր Հայրապետական սուրբ Աչն և իւր օրհնութեանց հետ նոթիին հաց, մերկին հանդերձ և ծարաւին ջուր կը հայթայթէ՝ ապրեցնելու համար Հայ ժողովուրդն, ազատելու համար իւր զաւակներն ի կորստենէ։

Զարդիս մարդորսներու գործունէութիւնն ամէն ժամանակէ աւելի ահաւոր վերպով կը սպառնայ Հայ ժողովրդի ազգայնութեան ընկիկ դրոշմը ջնջելու, զայն իւր Ուղղափառ եկեղեցիէն բաժնելու, ոտարացնելու, Հայ ընելէ դադրեցնելու և միանգամ ընդ միշտ բարոյապէս սպանելու, ինչ որ Ձեր Ս. Օծութիւն իւր Հովուապետական թարձրութենէն աւագ աչօք աւելի յստակ և աւելի պայծառ կը տեսնէ։ Կը տեսնէ մանաւանդ պապական համայնակուլ մարդորսութեան վայելած արդի թոյլտուութիւնն ամէնուրեք իբրև կտրուկ եղանակ կամ միջոց Հայ ազգը իսպառ անհետացնելու գործն ի գլուխ հանե-

լու իրականացնելու համար այդ հայամաշ ուղղութիւն մարդասիրական միջոցներ՝ Հայ կարօտ և քաղցած զաւակին՝ հաց ու թաց մատակարարելու միջոցներ կը գործադրուին։

Մասնաւոր և լուրջ ուշադրութեան արժանի է, Վեհափա՛ռ Տէր, այն ջանքերն ու զոհողութիւններ պապական մարդորսներու՝ պապականացնելու համար Կիլիկիոյ Հայ ժողովուրդն, մանաւանդ Ուլնիոյ լերանց Հայ զաւակները։ Ուլնեցիք, ինչպէս կը տեղեկանամ, դրկուած շահելու տարրական միջոցներէ, գրեթէ առ հասարակ կարօտ վիճակի մէջ կը գտնուին, և հաց ու սնունդ կը խնդրեն։ Արագօրէն կը փութան պապական բաթերաններ հաց ու թաց տալու, պայմանաւ սակայն որ ուլնեցի հայ զաւակներ, պատառ մը հացի համար թողուն, մերկանան, ուրանան իրենց հաւատք, իրենց եկեղեցին, իրենց ազգային նկարագիր՝ չքանան բարոյապէս և լինին բաթերաններու ստրուկներ։

Վեհափա՛ռ Ս. Հայրապետ, այդ լեռնականք իրենց կենաց պահպանութեան այս անհաւասար պայքարին, փորձութեան այս տարապայման ճգնաժամին մէջ՝ անմիջական օգնութեան կը կարօտին։ Պաղեստինի չարչարակիր տարագիրն ոչ այլ ինչ կարող է ընել այժմիկ, բայց եթէ խոնարհաբար դիմել Սուրբ Հայրապետիդ, պատուականաց պատուական Հօրդ հասարակաց, և խնդրել թախանձագին, որ Հայրդ որդեգորով, Հայրդ վառեալ ի սէր խանդակաթ իւր թշուառ և կարօտ որդւոց՝ փութայ օգնութեան հասնել Ուլնիոյ հայ զաւակներուն, փրկել զանոնք մարդորսութեան ճիրաններէն և անդարմանելի կորստեան վիհէն։

Սիօնի տարագիրն հաստատուն հաւատքով Ձեր Սուրբ Օծութեան կը ներկայանայ, և լի է վստահութեամբ, որ պիտի վայելէ, որպէս յանցելումն, Ձեր Վեհափառութեան թանկագին վստահութիւնն, և իւր դոյզն խնդրոյն, որ միայն և միայն ունեցւոց նիւթական կարօտութեան օգնելու խնդիրն է, ընդունելութեան և իրականացման։

Անձկանօք սպասելով Ձեր Վեհափառութեան հայրապետական օրհնաբեր մխիթարականին՝

մնամ որդի հարազատ
Արարատեան Առաքելական Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և Սուրբ Հայրապետիդ Ամենայն Հայոց

(Վաւերագիրը Իզմիրլյանի սեւագրութիւնն է և չի ստորագրված)

24 օգոստոսի 1898
ի Ս. Երուսաղէմ

Բ) ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿԸ

Բարձրաշնորհ Տ. Մատթէոս Սրբազան,
Ընտրեալակից Եղբայր ի Քրիստոս.

Ձեր եղբայրութեան մի կարևոր նամակն ստացայ յԷջմիածին և Տփխիս գալով կարգադրեցի ինչ որ պէտքն էր։ Այժմ յամէն ուստեք օգնութիւն կ'աղաղակեն, մանաւանդ Վասպուրական երկրէն, ուր ամբողջ գաւառի մի ժողովուրդ սովու ենթարկուած են և ճարահատ լինելով դէպի կրօնափոխութիւն դիմում են իրենց կեանքը պահպանելու համար։ Կաթոլիկ որսորդներ խիստ յաջող դեր կը խաղան, անհնարին է մրցել նոցա հետ, վասնզի Եւրոպայէն ահագին գումարներ թափում են հոն, առ որ Ազգային Պատրիարքարան կարող չէ այդ գետոց հոսանքներու դէմն առնել իւր դոյզնաքեայ կաթիլներով, թող այս երկրին Տէրն ես ում կու տայ նոցա իւր նորանոր հրովարտակներով։ Այլ ես մեզ ի՞նչ կը մնայ, միայն և միայն Աստուծոյ այցելութիւն և օգնութիւն։ Դաւիթն ես իւր անձկութեան մէջ զայս կը հայցէր՝ «Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ»։

Ոչինչ չէք գրեր Ձեր անձնական առողջութեան մասին, ինձ այնպէս կը թուի որ Դուք համակերպած էք համբերութեան և ընտելացած այդ կեանքին։ Դու գիտե՞ս ես շատ երջանիկ կը համարիմ զՔեզ քան զիս։ Օր չի լինիր որ տասն անգամ չյիշեմ Երուսաղէմ Երուսաղէմ։ Այս տարի մեծ հիւր մի ունեցաք, որոյ շարժմանէն աշխարհ և Երուսաղէմ քաղաք դղրդեցաւ. չգիտեմ՝ Դու էլ դղրդեցա՞ր, թէ խուցիդ մէջ փակուած չտեսար այդ քաղաքական մեսիային գալուստ։ Լսեցինք որ այդպէս է եղեր և այն ես պաշտօնապէս։ Համբերէ՛ սիրեմ զՔեզ, համբերէ՛, Քո հալածանք շատ թեթև են, համեմատութիւն չկայ իմ և Քո մեջ։

Մի բան ունիմ Ձեզմէ իմանալ, Ձեր Պատրիարքութեան օրով ես Ձեզ մի քանի խորհրդաւոր և կարևոր նամակներ գրած եմ, որոնք պաշտօնական չէին, այլ մասնաւոր, առանձնական և մտերմական, այդպիսի նամակները Դուք Ձեզ հետ վերցուցեր էք թէ թողեր էք Պատրիարքարանի դիւանատան, խնդրում եմ, որ այս մասին ստոյգ տեղեկութիւն տաք մեզ։

Մաղթելով Ձեզ համբերութիւն և առողջութիւն
Մնամ աղօթակից

Հայոց վշտակիր
ՀԱՅՐԻԿ

ի 28 Յունուարի 1899
ի Թիֆլիս

Դ) ԳՅՈՒՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱՂԱՆՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԻՋՄԻՐԼՅԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ

Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս
Արքեպիսկոպոս Իզմիրլեան

Արժանրնտիր Հայր և պատուականազոյն բարեկամ.

Բախտ ունեցայ ընդունել Ամենապատուութեանդ ցանկալի նամակը և Ձեր բարեմաղթութեանց համար մատուցանում եմ ջերմագին շնորհակալութիւնս, մաղթելով ի Տեառնէ երկարել Սրբազնութեանդ պատուական կեանքը, որ հաւասարապէս սիրելի է բոլոր հայ ժողովրդի համար, երկարէ այդ կեանքը աւելի բախտաւոր ապագայի համար։

Վեհ. Ս. Հայրապետին խօսեցի Ձեր նամակի առթիւ Պատասխանի ուշանալու միակ պատճառը եղել է Ձեր առ նա ուղղեալ նամակի ամիսներով ուշ ստացուած լինելը։ Վեհը կարգադրեց թէ որ պէտք էր, արդէն ըստ Ձեր ցանկութեան 6.000 ռ. ուղարկուած պիտի լինի Զ. և այդ մասին ինքը Վեհափառը դրեց Ձեր ամենապատիւ Սրբազնութեան, որ ես ինքս փոստ ձգեցի. ուրեմն աւելի հանգամանօրէն խմացած կլինիք այն նամակից։

Ցաւում եմ զլոմայթի կորստեան համար, որ միշտ կանոնաւոր ուղարկած եմ Ձեզ և այժմ ուղարկեցի կորած Բ. գրքի մի այլ օրինակ արժանապատիւ Մեսրոպ վարդապետին, որ մատուցանէ Ձեզ։ Եւ այսուհետև ես ինձ բարեբախտ կհամարիմ, եթէ ամէն պատուէրներով ու յանձնարարութիւններով դիմէք ինձ, հաստատելով, որ սրբութեամբ և անձանձիր պիտի կատարուին ամէնը։

Համբուրելով Ձեր Ս. Աջը և յանձնելով ինձ մաքուր աղօթից Ամենապատիւ Սրբազնութեանդ՝ մնամ խոնարհ ծառայ և որդի

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆ

17 փետրուար 1890
Տփխիս